ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ք. Երևան «28» հոկտեմբեր 2016թ.

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանը (այսուհետ՝ Համալսարան), ի դեմս Համալսարանի ռեկտոր Գայանե Գասպարյանի, մի կողմից, և «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Ասոցիացիա) ի դեմս Ասոցիացիայի նախագահ Կարեն Զաղոյանի, մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր).

Կարևորելով Համալսարանի կողմից որդեգրած նպատակները՝ ուսանողության և աշխատակիցների իրավագիտակցության մակարդակի բարձրացումը, կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողական մթնոլորտի ձևավորման և բարեխղճության սկզբունքների արմատավորման խթանումը,

Նպատակ ունենալով Համալսարանում բարձրացնել իրավական մշակույթը և զարգացնել ներդրված հակակոռուպցիոն մեխանիզմներ,

Գնահատելով Ասոցիացիայի դերը իրավապաշտպան և հակակոռուպցիոն ոլորտում որպես մասնագիտացված կազմակերպության,

Հատկորոշելով կոռուպցիան, որպես կրթությանը և ուսանողների հակակոռուպցիոն ընկալմանը խոչընդոտող երևույթ,

Նկատի ունենալով կողմերի պատրաստակամությունը համագործակցել հակակոռուպցիոն կրթության ոլորտում՝ բարձրացնելու համար այդ նպատակների զարգացմանն ուղղված իրենց ջանքերի արդյունավետությունը,

Կողմերը կնքեցին սույն Համագործակցության Համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի նպատակները.

1.1. Կողմերը միավորում են ջանքերը հետևյալ նպատակներով՝

- Օժանդակել Համալսարանում հակակոռուպցիոն և բարեխղճության ուսուցման, հակակոռուպցիոն մեխանիզմների մշակման և ներդրման ոլորտներում իրականացվող աշխատանքներին,

- Բարձրացնել Համալսարանի աշխատակիցների և ուսանողների իրավագիտակցության և հակակոռուպցիոն ընկալման մակարդակը,
- Բարձրացնել Ասոցիացիայի աշխատակիցների և անդամների օտար լեզուներին տիրապետման մակարդակը բանավեճի ակումբների և հանդիպումների միջոցով,
- Նպաստել կոռուպցիայի դեմ պայքարում աշխատողների և ուսանողների շահերի և իրավունքների պաշտպանությանը,
- Նպաստել կրթական ոլորտում օրենսդրության բարեփոխումների իրականացմանը:

2. Համագործակցության հիմնական սկզբունքները

2.1. Սույն Համաձայնագիրը սահմանում է Կողմերի միջև համագործակցության հետևյալ սկզբունքները.

- Կողմերի միջև համագործակցությունը հիմնված է սույն Հուշագրի դրույթների վրա,
- Համագործակցության ընթացքում Կողմերն առաջնորդվում են համաղեկավարման, թափանցիկության և ժողովրդավարության սկզբունքներով:

3. Համագործակցության ուղղությունները

3.1. Կողմերը համաձայնվում են.

- Համալսարանի ծրագրերով նախատեսված հակակոռուպցիոն դասընթացները իրականացնելու նպատակով, Համալսարանի աշխատողների և ուսանողների համար ուսումնական, աշխատանքային հարաբերությունների, ֆինանսատնտեսական և կրթական ոլորտներում իրավական և հակակոռուպցիոն թեմաներով դասընթացների կազմակերպում և անցկացում:
- Ծրագրով նախատեսված կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողական մթնոլորտի ամրապնդման, հակակոռուպցիոն միջոցառումներում ուսանողների մասնակցության խթանման աշխատանքերում օժանդակության և մասնագիտական խորհրդատվության ցուցաբերում՝ Ասոցիացիայի կողմից:
- Համալսարանի ուսանողների և աշխատողների մասնակցություն Ասոցիացիայի կողմից կազմակերպվող միջոցառումներին:
- Ասոցիացիայի աշխատողների, անդամների համար կազմակերպել և անցկացնել իրավաբանական անգլերեն դասընթացներ պարակտիկայի անցնող ուսանողների միջոցով:
- Օժանդակել Ասոցիացիային հրատապ նյութերի թարգմանության հարցում պարակտիկայի անցնող ուսանողների միջոցով:
- Ասոցիացիայի կողմից գործարկվող «Իրավաբան.net» անկախ լրատվական կայքի աշխատանքներում Համալսարանի ուսանողների համար արտադրական պրակտիկայի կազմակերպում և վերահսկում:

- Կրթական ոլորտում համատեղ ծրագրերի, ռազմավարությունների մշակում և իրականացում:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է երեք տարի ժամկետով:
4.2 Համաձայնագիրը կարող է դադարեցվել կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ այդ մասին մյուս կողմին ծանուցելով Համաձայնագրի դադարեցման պահից տասնհինգ օր առաջ:
4.3 Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել միայն կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:
4.2. Սույն Համաձայնագիրը կազմված է երեք էջից, հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակներից:

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան Երևան, 0002, Թումանյան 42	«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
Ռեկտոր՝ Գայանե Գասպարյան	Նախագահ՝ Կարեն Զաղոյան
Կ.Տ	Կ.Տ